ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 368 -Ա

ք.Արտաշատ

«19» նոյեմբերի 2024թ.

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 129-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 9-րդ, 12-րդ և 17-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող «Ջրաշենի ԱԱՊԿ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2024 թվականի նոյեմբերի 21-ին ժամը 10:00–ին կայանալիք մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Մրցույթը կազմակերպել մարզպետի աշխատակազմի նիստերի դահլիճում, մրցույթի արդյունքները ներկայացնել մարզպետին:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 **Ս. ԹԵՎՈՆՅԱՆ**

Հավելված
ՀՀ Արարատի մարզպետի
2024 թ. դեկտեմբերի 19
N 368-Ա որոշման

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

Հովհաննես Ուրֆալյան - Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Մարինե Ստեփանյան - Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ

Հանձնաժողովի անդամներ՝

Կարինե Գաբրիելյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հանրային առողջության բաժնի պետ

Մարիամ Սարգսյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Արարատ» մասնաճյուղի տնօրեն

Արտակ Գրիգորյան - Հայկական հոգեբուժական ասոցիացիայի անդամ

Տաթևիկ Ստեփանյան - Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ

Լեոնիկ Խաչատրյան - Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ :

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ